

**2-րդ ԴԱՍԱՐԱՆ**  
**ԵՍ ԵՎ ՇՐՋԱԿԱ ԱՇԽԱՐՀԸ**  
**ԹԵՄԱ 3 – ԵՍ ՄԵՆԱԿ ՉԵՄ**  
**Ուսուցչի նյութերի փաթեթ**

© Լուսինե Ալեքսանյան, Հասմիկ Անտոնյան

## ԵՆԹԱԹԵՄԱՅԻ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ընտանիքը փոքրիկ հասարակություն է, որի ամբողջականությունից է կախված մարդկային ամբողջ մեծ հասարակության անվտանգությունը:

### **Ֆ. ԱԴԼԵՐ**

Եթե ուզում ես բարիք գործել մեկ տարվա համար, ցորեն ցանիր, տասը տարվա համար՝ ծիրանի ծառ տնկիր, դարերի համար՝ մարդ դաստիարակիր:

### **Ժողովրդական իմաստություն**

Ի՞նչ է ընտանիքը: Հին հույներն ընտանիք էին համարում ծնողներին և երեխաներին, որոնք ապրում էին նույն հարկի տակ: Հազարավոր տարիներ մարդկանց մեծամասնությունը նույն կերպ է մտածել, և մինչ այսօր էլ աշխարհում շատերի համար դա է ընտանիքը: Սակայն կան նաև այլ կարգի ընտանիքներ: Օրինակ՝

- ծնողներն ու երեխաները միասին չեն ապրում,
- երեխան ապրում է մեկ ծնողի հետ,
- երեխան ապրում է իրեն որդեգրած ծնողների հետ,
- երեխան ապրում է տատիկ-պապիկի կամ այլ ազգականների հետ,
- երեխան ապրում է մանկատանը, որտեղ ընտանիքի դերը կատարում են դաստիարակներն ու դայակները, և այլն:

Բայց այս բազմազան ընտանիքները, այնուամենայնիվ, մի ընդհանուր բան ունեն. բոլորը մարդկանց խմբեր են, որոնց անդամները կապված են միմյանց հետ, հոգում են միմյանց մասին, կիսում են միմյանց հոգսն ու առօրյա աշխատանքը:

Յուրաքանչյուր ընտանիք այն առաջին բջիջն է, որտեղ բոլոր հմտությունների սկիզբն է դրվում, առանց որոնց երեխան չի կարող շփվել, հարաբերվել, խնդիրներ լուծել, որոշումներ կայացնել, արդյունավետ հաղորդակցվել և այլն: Հետևաբար կարևոր է, թե երեխան ինչպես է ընկալում իր և ընտանիքի մյուս անդամների դերն ու տեղը, իրավունքներն ու պարտականությունները, վերաբերմունքը միմյանց հանդեպ: Եվ քանի որ ընտանիքը հասարակության մանրակերտն է, ապա ներընտանեկան հարաբերությունները հետագայում տեղափոխվում են լայն հասարակություն: Ահա թե ինչու կարևոր ենք համարել ծրագրում ընդգրկել այս թեման:

## ԴԱՍ 1 (18) – ԵՍ ԵՎ ԻՄ ԸՆՏԱՆԻՔԸ

**Նպատակը** - Հստակեցնել և ամբողջացնել երեխաների պատկերացումներում տուն, ընտանիք, տոհմ, գերդաստան գաղափարները: Ներկայացնել բազմաբնույթ ընտանիքներ՝ տարբեր սերունդներ, ավանդական ընտանեկան բջիջ՝ ծնողներ և երեխաներ, միակողմանի կամ երկկողմանի ծնողազուրկ և այլն: Սեփական ընտանիքի և ընկերների ընտանիքների նկարագրման օրինակով ծանոթացնել ընտանիքի տարբեր կառուցվածքներն:

### **Վերջնարդյունքներ**

**2Շ.Մ.Փ.Ը1** *Բացառել, որ ընտանիքները կարող են տարբեր լինել՝ ըստ կազմի (մեծ, փոքր, երկու ծնողով, մեկ ծնողով, առանց ծնողի ընտանիքներ, ազգականներ):*

### **Անհրաժեշտ պարագաներ**

1. «Տուն» թերթիկ՝ յուրաքանչյուրին: Նախապես երեխաներին պետք է ասել, որ իրենց ընտանիքի անդամների լուսանկարներ բերեն, որոնք կարող են կտրտել, փակցնել, կամ կարող են նկարել: Սոսինձ և թղթի մկրատ: Եթե այդ տարբերակները հարմար չեն, տրվում են «Դեմքեր»՝ մայրիկների, հայրիկների, երեխաների, պապիկ-տատիկների հավանական նկարներով: Երեխաները կլարող են իրենց ընտանիքի կամ հարազատների ընտանիքների կազմը հավաքել՝ օգտվելով այս տարբերակից:
2. «Ծառ» թերթիկ՝ յուրաքանչյուրին և «Դեմքեր» փաթեթը

### **Ընթացքը**

1. **«Ես և շրջակա աշխարհը» առարկայի գործող դասագրքի՝ թեմա 2, դաս 1, էջ 11-14 նյութերը՝ համադրելով ստորև ներկայացված նյութերի հետ:**  
[«Ես և շրջակա աշխարհը, Ն.Թորոսյան, Լ.Ալեքսանյան» մաս 1](#)

1. Ուսուցիչը դիմում է երեխաներին հարցով.
  - Երեխանե՛ր, ի՞նչ եք կարծում, ի՞նչ է ընտանիքը:
  - Ովքե՞ր են սովորաբար ընտանիքի անդամ համարվում:

Մտքերի տարափի միջոցով երեխաները կարծիքներ են հայտնում: Ապա ուսուցիչը շեշտադրում է «տուն, ընտանիքի անդամներ, նույն տանիքի տակ ապրողներ» գաղափարները:

2. Ապա ծանոթանում են վերը հիշատակված դասագրքի ([«Ես և շրջակա աշխարհը», Ն.Թորոսյան, Լ.Ալեքսանյան» մաս 1](#)) 11-րդ էջի նյութին: Կարևոր է, որ երեխաները հասկանան՝ ընտանիքներն իրենց կազմով տարբեր կարող են լինել, չկա ընտանիքի կառուցվածքի միակ ճիշտ տարբերակ: Հաճախ այս ընկալումը միայն մայր կամ միայն հայր ունեցող երեխաներին բարդութաւորում է, անլիարժեքության զգացում է ձևավորում, ինչը անդառնալի հետք է թողնում նրանց ողջ կյանքի վրա: Այս աշխատանքը կարևոր է հենց այդ բարդույթը հաղթահարելու համար: Ընտանիքը նույն տանիքի տակ ապրող մարդիկ են, անգամ կենդանիները, որ նույն տանն են ապրում՝ կարող են համարվել ընտանիքի անդամներ, հորաքույրը, որ իրենց հետ է ապրում, մայրիկի զարմիկը, որ եկել է սովորելու և իրենց հետ է ապրում, բոլորը իրենց ընտանիքն են: Կարևորը ընտանիքում տիրող ջերմ սիրո ու հոգատարության մթնոլորտն է, որ բոլոր ընտանիքները միավորում է:
3. Ապա երեխաներին ներկայացնում է «Տուն» թերթիկը: Բացատրում է, որ երեխաները պետք է պատկերացնեն, թե այդ տունն իրենց տունն է, և ընտանիքի անդամների՝ նախապես բերած լուսանկարները կամ նկարները փակցնեն լուսամուտներին՝ իրենց ընտանիքի մանրակերտը ստանալով: Աշխատանքն ավարտելուց հետո երեխաները շրջում են դասարանում՝ իրար ներկայացնելով աշխատանքները, համեմատելով և քննարկելով իրենց ընտանիքների կազմը: Ամփոփիչ ընդհանուր քննարկման ժամանակ կարելի է անդրադառնալ հետևյալ հարցերին.
  - Միմյանց ընտանիքներին ծանոթանալուց հետո ի՞նչ պարզեցիք:
  - Ինչո՞վ էին նրանք նման:
  - Ինչո՞վ էին տարբեր:
  - Կարո՞ղ ենք ապրել առանց ընտանիքի: Ինչու՞: Ինչու՞ ոչ:
  - Կարո՞ղ եք կռահել՝ ինչ է նշանակում ընտանիք բառը (ընդ-տանիք, տանիքի տակ):

Վարժությունը կարելի է ավարտել այսպիսի խոսքով. «Այսպիսով, ընտանիք ենք անվանում այն մարդկանց, ովքեր ապրում են միևնույն տանիքի տակ՝ նույն տանը և հոգ են տանում միմյանց մասին»:

Այս վարժությունը հնարավորություն է տալիս համագործակցելու, քննարկելու, գիտակցելու միմյանց նմանություններն ու տարբերությունները, ավելի լավ ճանաչելու միմյանց: Այն նաև նախապայման է ստեղծում, որպեսզի անցում կատարվի անմիջական ընտանիքից մերձավոր ընտանիքի գաղափարին, որի տեղը կհստակեցվի հաջորդ վարժությամբ:

4. Հաջորդ վարժությամբ ներմուծել ընդլայնված ընտանիքի գաղափարը, մերձավոր ընտանիքների կապն անմիջական ընտանիքի հետ, նրանց տեղը տոհմաճառի վրա: Ուսուցիչը կարդում է [«Ես և շրջակա աշխարհը» ձեռնարկի \(Ն.Թորոսյան, Լ.Ալեքսանյան, մաս 1\)](#) էջ 13-ի տեքստը ազգականների մասին: Ապա երեխաներին տրվում է «Ծառը» թերթիկը: Ուսուցիչը բացատրում է, թե ծառի վրա նկարները տեղադրելով՝ ինչ կերպ լրացնեն իրենց տոհմաճառը. բնին մոտ՝ տատիկ-պապիկներին, սաղարթի կենտրոնում՝ իրենց անմիջական ընտանիքը (հայր, մայր, քույր, եղբայր), իսկ շուրջը, համապատասխանաբար, հայրական և մայրական կողմի ազգականներին՝ իրենց ընտանիքներով: Շարելուց հետո երեխաները շրջում և ներկայացնում են իրենց ընտանեկան ծառերը՝ համեմատելով և քննարկելով: Երեխաները համոզվում են, որ այն ազգականները, որոնք դուրս էին մնացել անմիջական ընտանիքից, իրենց տեղն ունեն տոհմաճառի վրա: Տոհմաճառը կարող է ընդլայնվել՝ մի քանի սերունդ հետ գնալով, ուսուցիչը կարող է երեխաներին ասել, որ ընտանեկան «Ծառը» կարող են տուն տանել և ընտանիքի անդամների հետ լրացնել՝ հիշելով իրենց տատիկ-պապիկներին: Այս վարժություններն օգնում են որ երեխան առաջին անգամ պատկերացում կազմի ընտանիքի շարունակականության, սերունդների հերթագայության և այն մասին, որ ինքն էլ այդ շղթայի մասնիկն է և իր ապուպապերի ստեղծած մշակութային ժառանգության կրողն ու փոխանցողը: Սովորում է դասակարգել:

**Հիշեցում ուսուցչին.** Հատուկ նրբանկատություն ցուցաբերել այն երեխաների հանդեպ, որոնց ընտանիքների կազմը տարբերվում է ընդունված ընտանիքի կազմից, ծնողազուրկ են կամ ապրում են ծնողներից մեկի հետ: Համեմատությունները պիտի լինեն որակական, ոչ թե քանակական. այսինքն՝ բոլոր ընտանիքներն են կարևոր, ինչպիսին էլ լինի նրանց կազմը:

## ԴԱՍ 2 (19) – ԴԵՐԵՐՆ ԸՆՏԱՆԻՔՈՒՄ

**Նպատակը** – Օգնել հասկանալու, որ ընտանիքներն ունեն կարիքներ, որոնք հոգում են հենց ընտանիքի անդամները, գիտակցելու, որ համատեղ աշխատանքն ընտանեկան կյանքի մի մասն է, ընտանեկան փոխհարաբերությունների զգալի մասը փոխադարձ հարգանքի և հոգատարության դրսևորում է: Օգնել գիտակցելու, որ ընտանիքները փոփոխվում են, և այդ փոփոխությունները կարող են որոշ դժվարություններ առաջացնել, կարևորը միմյանց սատարելով դրանք հաղթահարելն է:

### **Վերջնարդյունքները**

**2Շ.Մ.Փ.Ը1ա** *Բացադրել ընտանիքի անդամների դերերը (այդ թվում՝ իր), իրավունքներն ու պարտականությունները կանանց և տղամարդկանց հավասարության տեսանկյունից, ներկայացնել, թե ինչպես են դրանք փոփոխվում ժամանակի ընթացքում:*

### **Անհրաժեշտ պարագաներ**

#### **Ընթացքը**

«Ես և շրջակա աշխարհը» առարկայի գործող դասագրքի թեմա 2, դաս 1, էջ 12 և 14-ի նյութերը՝ համադրելով ստորև ներկայացված նյութերի հետ:

[«Ես և շրջակա աշխարհը», Ն.Թորոսյան, Լ.Ալեքսանյան»>> մաս 1](#)

1. Կատարում են նշված դասագրքի էջ 12-ի վարժության օրինակով աշխատանք: Ամեն ընտանիք ունի կարիքներ՝ տան, հագուստի, սննդի, մաքրության, խնամքի, սիրո: Ովքե՞ր են հոգում այդ կարիքները: Երեխաները պետք է փորձեն մտածել այդ մասին: Երբևէ իրենց նման հարցեր չեն տվել գուցե, և իրենց թվում է, որ դա ինքնաբերաբար ստանում են: Այս վարժությունը բացահայտում է, թե ովքեր են հոգում ընտանիքի կարիքները, և թե իրենք ինչ մասնակցություն ունեն դրանում: Շատ կարևոր է, որ ուսուցիչը շեշտադրի սերը... Երեխաները պետք է հասկանան, որ սերը նույնպես կարիք է, դրա կարիքը բոլորն ունեն, և իրենք էլ, իրենց ծնողներին, քույր-եղբայրներին, տատիկ-պապիկներին սիրելով, հոգում են նաև նրանց սիրված լինելու կարիքը: Պետք է հասկանան, որ եթե նշել են մաքրությունը որպես միայն մայրիկի հոգս, դա ճիշտ չէ, և եթե իրենք դեռ չեն օգնում մայրիկին մաքրության հարցում, ապա կարող են օգնել նրան ավելորդ չթափելով և չկեղտոտելով: Եվ շատ կարևոր է որ այս հարցերում նրբորեն

շոշափվեն սեռային հավասարության հարցեր: Օրինակ՝ իսկ հայրիկը չի՞ կարող մաքրության հարցերում մայրիկի հետ կիսել հոգսը, իսկ իրենց խնամքի՞, և այլն: Ակնհայտ է, որ կլինեն ընտանիքներ, որտեղ այդ հավասարությունը պահպանվում է: Հնարավորություն տվեք, որ այդ երեխաները խոսեն այդ մասին, թե ինչպես են իրենց ընտանիքում միասին, հավասարապես հոգում նման հոգսերը հայրիկն ու մայրիկը: Կան մայրիկներ, որոնք ողջ օրը աշխատում են, ինչպես հայրիկը, իսկ հետո էլ աշխատում են տանը մինչև ուշ գիշեր: Արդյոք դա արդա՞ր է: Կամ՝

2. [«Ես և շրջակա աշխարհը. մաս 1» \(Ն.Թորոսյան,Լ.Ալեքսանյան\)](#) դասգրքի էջ 15-20-ի նյութերը կարելի է կատարել կամ ստորև ներկայացված տարբերակով անցկացնել դասը:

Երեխաները մտքերի տարափոփ թվարկում են տնային գործերը: Բաժանվում են խմբերի: Նրանց տրվում են տարբեր կազմով ընտանիքի անդամների նկարները և «Տնային գործեր» քարտերը: Լավ կլինի, որ ուսուցիչը որոշ առաջարկներ անի. եթե դպրոցը գյուղական է, պարզ է, որ երեխաները կդիտարկեն գյուղի տան հատուկ գործերը, իսկ եթե քաղաքային է՝ քաղաքի տան գործերը: Ճիշտ կլինի, եթե ուսուցիչը որոշ խմբերի խնդրի, որ գյուղական ընտանիքի օրինակ դիտարկեն, որոշ խմբերի՝ քաղաքային: Սա կօգնի երեխաներին պատկերացնելու երկու համայնքների առանձնահատկություններն էլ: Երեխաները պետք է յուրաքանչյուր գործի դիմաց գրեն ընտանիքի անդամի անունը: Կարևոր է, որ երեխաներն ուշադրություն դարձնեն, թե ընտանիքի որ անդամի անունն է ավելի հաճախ գրվել տարբեր գործերի դիմաց, և ում անունն է, որ ավելի քիչ են գրել: Փորձեն մտածել դրա շուրջ և մեկնաբանել: Ապա տարվում է դասարանական քննարկում ուղղորդված հարցերով: Ամփոփման ժամանակ ուսուցիչը պետք է ընդգծի, որ տնային գործերն արվում են թե՛ մեկ, թե՛ մյուս սեռի կողմից: Կարևոր չէ, թե ով որ գործն է անում, կարևորը՝ ընտանիքում միմյանց օգնելն է և մեկի շատ չճանրաբեռնվելը:

Այս վարժության միջոցով երեխաները գիտակցում են, որ ընտանիքի կարիքները հոգալու համար կարևոր են փոխադարձ օգնությունն ու հոգատարությունը, հասկանում են, որ պարտավորություններն ընտանիքում բաշխվում են բոլոր անդամների վրա՝ ըստ անհրաժեշտության և հնարավորությունների: Վարժությունն օգնում է գիտակցելու սեփական անձի և ընտանիքի յուրաքանչյուր անդամի կարևորությունը, ձևավորում է պատասխանատվության զգացում, սովորեցնում համագործակցել, որն էլ ընտանիքի համերաշխության գրավականն է:

3. Այս աշխատանքը կարելի է վերնագրել «Տուն-տունիկ ենք խաղում»: Խաղի նպատակն է գիտակցելը, որ ընտանիքներում փոփոխությունները բնական

երևույթ են, և կարող են, դրանց հետ կապված, առաջանալ ինչպես բացասական, այնպես էլ դրական զգացմունքներ:

**Պարագաներ** - «Դեմքեր» փաթեթը՝ 2 ծրարով:

**Նախապատրաստական աշխատանք** - Ուսուցիչը նախօրոք դասարանը մտովի բաժանում է թվային տարբեր կազմերով ընտանիքների և թվով համապատասխանեցնում է «Դեմքեր» նկարները՝ (տես 1-ին վարժության պարագաները): Յուրաքանչյուր ընտանիքի համար մի տարբերակիչ նշան է ընտրում՝ (օղակ, խաչ, քառակուսի, եռանկյունի և այլն) և մատիտով նշում նկարների դարձերեսին: Նկարները բաշխում է 2 ծրարի մեջ՝ ըստ սեռերի:

Սկզբում ուսուցիչը ներմուծում է փոփոխությունների անխուսափելիության գաղափարը՝ խոսելով իրենց հայրիկների, մայրիկների նախկին ընտանիքների մասին, իրենց հավանական ապագա ընտանիքների, մեծանալու հետ ենթադրվող հավանական այլ փոփոխությունների մասին (սովորել, աշխատել, ամուսնանալ, նոր քույրիկ կամ եղբայրիկ ունենալ), նրբորեն խոսում է ցավալի փոփոխությունների մասին՝ տատիկ-պապիկ կորցնել և այլն: Երեխաները կարող են իրենք էլ որոշ օրինակներ ասել իրենց կյանքից:

Ապա ուսուցիչը երեխաներին է մոտեցնում ծրարները, որոնցից նրանք մեկական դեմք են հանում. Տղաները՝ մի ծրարից, աղջիկները՝ մյուս: Դասարանում շրջելով՝ փորձում են գտնել իրենց «ընտանիքի» մյուս անդամներին (ըստ նկարների տարբերակիչ նշանների) և խմբեր են կազմում: Տրվում է 5 րոպե ժամանակ, որի ընթացքում երեխաները նախորդ վարժության օրինակով արագ քննարկում և որոշում են, թե «իրենց» ընտանիքում ով գործի ինչ բաժինն է անում: Այնուհետև ուսուցիչը յուրաքանչյուր «ընտանիքի» մեկական իրավիճակ է տալիս, որը ենթադրում է փոփոխություններ և պարտականությունների վերաբաշխում.

### **Իրավիճակներ.**

- ընտանիքում քույր կամ եղբայր է ծնվել,
- քույրիկն ընդունվել է ինստիտուտ,
- մեծ քույրն ամուսնացել է,
- ավագ եղբայրը բանակ է գնացել,
- տատիկն ու պապիկը էլ մեզ հետ չեն ապրում,
- հայրիկը բացակայում է ընտանիքից,
- մայրիկն սկսել է աշխատել,

- հայրիկը փոքրիկ շնիկ է բերել.

և այլն:

Խմբերի անդամները հերթով ներկայացնում են իրենց պարտականությունները նախքան նոր իրավիճակը և դրանից հետո: Խոսքը ձևակերպում են ըստ հետևյալ մոդելի.

Առաջ ես տանը.....:

Հիմա, երբ....., ես.....:

Ամփոփիչ հարց.

- Ձեր ընտանիքում առաջացած փոփոխությունն ուրախացրե՞ց ձեզ, տխրեցրե՞ց, զարմացրե՞ց, ոգևորե՞ց: Ինչո՞ւ:

Այս վարժությունը ձևավորում է համագործակցելու, հաղորդակցվելու, հարմարունակության, ստեղծագործաբար և քննադատաբար մտածելու, միմյանց լսելու, որոշումներ կայացնելու հմտություններ: Նպաստում է սեփական դերի գիտակցմանը և ապրումակցման ձևավորմանը: Խթանում է երևակայությունը:

4. Տնային հանձնարարություն
5. Ձևավորող գնահատում:

## **ԴԱՍ 3 (20) – ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹՅՈՒՆՆ ԸՆՏԱՆԻՔՈՒՄ**

**Նպատակը** – Օգնել հասկանալու, որ յուրաքանչյուր ընտանիք ունի համակեցության կանոններ, և գիտակցելու դրանց հետևելու նպատակը:

### **Վերջնարդյուքները**

**2Շ.Մ.Փ.Ը1գ** Արդյունավետ շփվել ընտանիքում, ծնողների, փառիկ-պապիկների, քույրերի ու եղբայրների, այլ ազգականների հետ:

**2Շ.Մ.Փ.Ը1-2** Ցուցաբերել հոգատար վերաբերմունք մերձավորների նկատմամբ:

### **Անհրաժեշտ պարագաներ**

«Ընտանեկան կանոններ» նկար-ցուցապաստառները, յուրաքանչյուրին՝ կանոնների թվով կաշուն կետիկներ:

### **Ընթացքը**

1. Ուսուցիչը հարցերով խթանում է դասի թեմայի գաղափարները:
2. Նկարները փակցվում են դասարանի պատերին: Ուսուցչի օգնությամբ երեխաները ծանոթանում են նկարներում ներկայացված կանոններին.
  - շնորհակալություն ասել,
  - ներողություն խնդրել,
  - հիշել և շնորհավորել միմյանց տոները,
  - միասին ճաշել,
  - անկողինը հավաքել,
  - դրսից տուն գալուն պես, ուտելուց առաջ, զուգարանից հետո ձեռքերը լվանալ,
  - դրսից գալուց հետո հագուստը փոխել,
  - զուգարանից օգտվելուց հետո ջուրը քաշել,
  - սպասել իր հերթին,
  - ջուրն օգտագործելուց հետո ծորակները փակել,
  - ավելորդ լույսերն անջատել,
  - և այլն:

Երեխաներին հանձնարարվում է մոտենալ և կետիկները փակցնել այն նկարներին, որոնցում պատկերված կանոնները կիրառվում են իրենց ընտանիքում: Ուսուցիչը երեխաներին դիմում է հարցով.

- Կա՞ն արդյոք կանոններ, որ այստեղ թվարկված չեն:
- Որո՞նք են դրանք:

Ուսուցիչը կարող է իր կողմից հիշատակել մեկ-երկու կանոն, օրինակ՝

- օգնել, երբ մեկը դրա կարիքն ունի,
- խնամել, եթե որևէ մեկը հիվանդ է:

- Նկարների վրա նշված կանոններից որո՞նք են հիմնականում բոլոր ընտանիքներում ընդունված:

Վարժությունն օգնում է հասկանալու, որ ընտանիքում կանոնները նպաստում են միմյանց նկատմամբ հարգանքի ու սիրո դրսևորմանը, արդյունավետ միջոց են ընտանիքում համագործակցելու և համերաշխ ապրելու համար: Նշված կանոններին հետևելը նաև ձևավորում է առողջ ապրելակերպի սովորույթներ:

3. Այնուհետև իրականացնում են մեկ այլ վարժություն, որը կոչվում է «Ով է որոշողը»: Ակնհայտ է, որ տան կանոնները և շատ այլ հարցեր որոշում են մեծերը, ծնողները, քանի որ ողջ պատասխանատվությունը նրանցն է: Երեխաները պետք է հասկանան, որ այդ որոշումները երբեմն կարող են իրենց դուր չգալ, բայց դրանք ուղղված են ընտանիքի ավելի երիտասարդ և անփորձ անդամներին պաշտպանելուն և ուղղորդելուն: Սակայն այնուամենայնիվ կան մի շարք հարցեր, որոնց որոշողը երեխաներն են և ճիշտ կլինի այդ որակը իրենց մեջ ձևավորել փոքրուց: Երբեմն երեխաները չեն կարողանում որոշումներ կայացնել նույնիսկ ամենափոքրիկ հարցերում, որոնց որոշումներն իրենցը պետք է լինեն, օրինակ՝ պայուսակը դասավորելիս ինչ վերցնել, դասերը երբ անել, երբ հանգստանալ, ինչ ուտել, բազում ինչ խաղեր խաղալ, ում հետ ընկերություն անել, ինչպես վարվել ընկերների հետ և այլն: Կարևոր է այդ որոշումներ կայացնելու որակը ձևավորել փոքրուց: Այսպիսով, ուսուցիչը զրոյց է անցկացնում ընտանիքում կայացվող որոշումների մասին:

Ո՞վ է որոշում իրենց ընտանիքում.

- երբ պառկել քնելու,
- ինչ հագնել դպրոց գնալիս,
- ինչ հաղորդում նայել հեռուստացույցով,
- տնային որ գործերն ով անի, և այլն:

Ապա երեխաները լրացնում են «Ո՞վ է որոշողը» թերթիկը՝ համապատասխան վանդակում գրելով որոշողի անունը: Աշխատանքն ավարտելուց հետո 5 հոգանոց խմբերով քննարկում են, թե իրենց ընտանիքում որ որոշումն ով է կայացնում և ինչու: Աշխատանքը հնարավորություն է տալիս գիտակցելու սեփական անձի դերն ու կարևորությունը, նաև խթանում է ստեղծագործական և քննադատական մտածողությունը, ձևավորում է որոշում կայացնելու, դասակարգելու և կողմնորոշվելու հմտություններ:

Հիշեցում ուսուցչին. ուսուցիչը պետք է օգնի գիտակցելու, որ միանշանակ ճիշտ պատասխաններ չկան. յուրաքանչյուր ընտանիք տարբեր է, և ամեն ընտանիք կարող է ունենալ իր պատասխանները:

4. Այնուհետև ուսուցիչը փորձում է հարցերով վեր հանել, թե արդյոք հեշտ է միշտ հաշտ լինելը, արդյոք վեճեր կոնֆլիկտներ չեն լինում ընտանիքում, մայրիկը մի՞շտ է գոհ լինում իրենցից: Արդյոք իրենք չե՞ն կռվում, վիճում քույրիկի, եղբոր հետ կամ զայրացնում մայրիկին այլ պատճառներով: Ուսուցիչը դասարանը բաժանում է 4-5 հոգանոց խմբերի: Ապա յուրաքանչյուր խմբին ներկայացնում է մի պրոբլեմային իրավիճակ՝ առաջարկելով, որ խմբով փորձեն լուծում գտնել:

### **Իրավիճակներ**

1. Տանը երկու քույրիկ վիճում են խաղալիքի համար:
2. Մայրիկը զայրացել է և արգելել տղային նայել իր սիրած մուլտֆիլմը, որովհետև նա չի սովորել դասերը մինչև ուշ երեկո:
3. Քույր ու եղբայր թափել են խաղալիքները և չեն հավաքել: Յուրաքանչյուրը գործը թողել է մյուսին: Մայրիկը բարկացել է:
4. Ձեզ անտեղի մեղադրել են, և մայրիկը բարկացել է ձեզ վրա:
5. Դասերը պատրաստելիս հայրիկի օգնության կարիքը կա, բայց նա հոգնած եկել է տուն ու խնդրել իրեն չանհանգստացնել:

Այնուհետև յուրաքանչյուր խումբ պետք է հերթով ներկայացնի իր լուծումը, ցանկության դեպքում՝ դերակատարումով, իսկ եթե դժվարանում են, կարող են պատմել: Այնուհետև մնացած բոլոր խմբերի ներկայացումներին հաջորդում է քննարկում՝ ուղղորդված հետևյալ հարցերով.

- Ձեր կարծիքով, ընդունելի՞ էր լուծման այդ տարբերակը: Ինչու՞:
- Ինչու՞ ոչ:
- Լուծման ուրիշ ի՞նչ տարբերակներ եք հնարավոր համարում:

Երեխաները հնարավորություն են ստանում գիտակցելու, որ մարդկանց գործողություններն ազդեցություն են ունենում միմյանց զգացմունքների և վարվելակերպի վրա, սովորում են տարբերակներ փնտրել կոնֆլիկտները խաղաղ լուծելու համար: Սովորում են ստեղծագործաբար մտածել, նույն իրավիճակի համար փնտրել այլընտրանքային տարբերակներ: Ձևավորվում է համագործակցելու հմտություն, դիմացինի ցանկությունները և զգացմունքները հաշվի առնելու ունակություն, մտքերը հստակ ձևակերպելու կարողություն:

## ԴԱՍ 4 (21) – ԸՆՏԱՆԵԿԱՆ ԺԱՄԱՆՑ ԵՎ ՏՈՆԵՐ

**Նպատակը** - Օգնել գիտակցելու ընտանեկան միջոցառումների համատեղ կազմակերպման կարևորությունը, ինչը նպաստում է ներընտանեկան կապերի և ներդաշնակ հարաբերությունների ձևավորմանը: Օգնել գիտակցելու, որ տարբեր տոնակատարություններ ունեն իրենց առանձնահատկությունները՝ պայմանավորված ազգային-մշակութային ավանդույթներով:

### **Վերջնարդյունքները**

**2Շ.Մ.Փ.Ը1բ** *Նկարագրել, թե ինչպես են փարբեր ընտանիքները կազմակերպում հանգիստը, ժամանցը, փոները:*

### **Անհրաժեշտ պարագաներ**

«Ընտանեկան ժամանցներ» նկարների փաթեթ

### **Ընթացքը**

«**Ես և շրջակա աշխարհը**» առարկայի գործող դասագրքի թեմա 2, դաս 3, էջ 21 և 24-ի նյութերը՝ համադրելով ստորև ներկայացված նյութերի հետ:

[«Ես և շրջակա աշխարհը», Ն.Թորոսյան, Լ.Ալեքսանյան», մաս 1:](#)

1. Ուսուցիչը դասն սկսում է ուղղորդող հարցերով.

- Սիրու՞մ եք ազատ ժամանակը ընտանիքով անցկացնել: Ինչու՞:
- Ի՞նչն եք հավանում:
- Տիրու՞մ եք, եթե համատեղ ժամանցը չի կայանում: Ինչու:
- Կուզենայի՞ք միասին ավելի շատ ժամանակ անցկացնել:
- Ի՞նչ եք զգում, երբ ձեր նախատեսած ժամանցը չի կայանում:

Այնուհետև ծանոթանում են դասագրքի փոքրիկ տեքստին, որից հետո կարելի է կատարել փոքրիկ վարժություն: Դասարանը բաժանվում է 5-6 հոգանոց խմբերի, որոնց հանձնարարվում է մի փոքրիկ բեմադրություն պատրաստել այն մասին, թե ընտանիքն ինչպես է միասին անցկացնում ազատ ժամանակը: Յուրաքանչյուր խումբ, համաձայնության գալով, ընտրում է որևէ ժամանց, որպեսզի խմբի յուրաքանչյուր անդամի այդ ժամանցի ձևը ծանոթ լինի: Այնուհետև խմբերը դասարանին են ներկայացնում այն դերախաղով, իսկ դասընկերները կռահում են ժամանցը, նաև ընտանիքի որ անդամի դերն ով էր կատարում:

**Հիշեցում ուսուցչին**. Թույլ տվեք, որ երեխաներն իրենք կատարեն դերաբաշխումը, ինքնուրույն որոշեն, թե ով է սկսելու և այլն: Նաև պետք է հաշվի առնվի, որ որոշ երեխաներ կարող են անբարեհաջող ընտանիքներից լինել,

որոնցում կարող են խնդիրներ լինել: Պետք է հնարավորինս նրբանկատ լինել և թույլ չտալ, որ երեխան սրտնեղելու առիթ ունենա:

2. Այնուհետև կատարում են հետևյալ աշխատանքը: Դիտում են նկարները և պատմում, թե ինչպես են հանգստանում ընտանիքները: Համեմատում են իրենց ընտանեկան ժամանցների հետ, պատմում են իրենց ընտնեկան ժամանցների մասին, որոնք էստեղ հիշատակված չեն:
3. Այնուհետև անցնում են «Ընտանեկան տոներ» աշխատանքին: Սկսում են հարցերին պատասխանելով: Որից հետո մտքերի տարափով երեխաները թվարկում են իրենց ծանոթ տոները: Ապա դասարանը բաժանվում է 4 հոգանոց խմբերի, որոնց տրվում են «Մեր տոները» նկարների փաթեթը: Երեխաները նկարները կտրտում և շարում են տվյալ տոնին համապատասխան տողում, որից հետո ներկայացնում են, թե իրենց տանն ինչպես են անցկացնում այդ տոնը: Այնուհետև խմբերը շրջում են և ծանոթանում միմյանց կատարած աշխատանքին: Այս ուրախ վարժությունը ստեղծում է բարձր տրամադրություն, նպաստում համագործակցությանը, խթանում է երևակայությունը, խորացնում այն գիտակցումը, որ համատեղ անցկացրած ժամանակը նպաստում է համերաշխությանը: Նաև ծանոթացնում է տարբեր ավանդույթների հետ:
4. Դասն ամփոփում է ընդհանուր քննարկում-զրույցը, որի նպատակն այնպիսի արժեքների գիտակցման վերհանումն է, որոնք ստեղծում են ապահովության մթնոլորտ. Օրինակ՝ փոխադարձ սեր, համերաշխություն, այլ արժեքներ, առանց որոնց ընտանիքը լիարժեք չէ: Այս դասի ընթացքում երեխաները գիտակցում են, որ տարբեր ընտանիքների ժամանցները և՛ նմանություններ, և՛ տարբերություններ ունեն, սովորում են համագործակցել, ստեղծագործաբար մտածել, կարևորում են ջերմ մթնոլորտն ընտանիքում:
5. Տնային հանձնարարություն
6. Ձևավորող գնահատում

## **ԴԱՍ 5 (22) - ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ**

**Նպատակները** - Օգնել գիտակցելու, թե ինչ է անհրաժեշտ ընկերության համար, հասկանալու, թե ինչը կարող է օգնել կամ խանգարել ընկերությանը: Հասկանալ, թե որոնք են իսկական ընկերոջը բնորոշ հատկանիշները, մեկնաբանել, որ իսկական ընկերությունը պայմանավորված չէ սեռով:

### **Վերջնարդյունքներ**

**2Շ.Մ.Փ.Դ1-3** *Նկարագրել և օրինակներ բերել, թե ինչը կարող է օգնել կամ խանգարել ընկերությանը:*

**2Շ.Մ.Փ.Դ3** *Բնութագրել, թե ինչպիսին պետք է լինի ընկերը, որ որակներն են բնորոշ լավ ընկերոջը և բացատրել, որ դրանք պայմանավորված չեն սեռով:*

### **Անհրաժեշտ պարագաներ**

- Նկարների փաթեթ

### **Ընթացքը**

**«Ես և շրջակա աշխարհը» առարկայի 3-րդ դասարանի գործող դասագրքի թեմա 1, դաս 2, էջ 3-9 նյութերը՝ համադրելով ստորև ներկայացված նյութերի հետ.**

**[«Ես և շրջակա աշխարհը» Լ. Ալեքսանյան, Ն. Թորոսյան մաս 1](#)**

1. Դասը կարելի է սկսել վերը նշված դասագրքի 3-րդ էջի հեքիաթի ընթերցմամբ, որից հետո պետք է կազմակերպել քննարկում հարցերի օգնությամբ՝ մեկնաբանելով, բացատրելով, թե ինչի համար են ընկերները, որքան դժվար է մենակ լինել, ինչեր կարելի է անել ընկերների հետ:

2. Այնուհետև ընթանում է քննարկում հարցերի օգնությամբ, որպեսզի պարզվի, թե ինչ պատկերացում ունեն աշակերտները ընկերության մասին, հասկանո՞ւմ են արդյոք, թե ինչպես կարելի է պահպանել ընկերությունը:

3. Այնուհետև առաջարկում է նայել նկարները: Երեխաներին առաջարկվում է ցույց տալ այն նկարները, որոնք իրենց դուր են եկել, այնուհետև՝ որոնք դուր չեն եկել: Կարևոր է, որ նրանք կարողանան բացատրել, թե ինչու են այդպես կարծում:

Կարևոր է, որ աշակերտները հասկանան, թե ինչը կարող է խանգարել ընկերությանը, ինչ պետք է անել այն պահպանելու համար, ինչպիսին պետք է լինել, պատահե՞լ է, որ իրենք օգնել են իրենց ընկերներին, ի՞նչ զգացմունք են ունեցել այդ ժամանակ, երբ ընկերները իրենց են օգնել: Շատ կարևոր է, որ նրանք հասկանան՝ ընկեր լինել, չի նշանակում միշտ նույն կարծիքն ունենալ, միշտ համաձայն լինել, այլ ընկերոջ հետ կարելի է բանավիճել, որևէ հարց քննարկել: Այս աշխատանքը կատարելիս պետք է անդրադարձ կատարել **«Պատճառ և հետևանք»** խաչվող հասկացությանը: Կարևոր է նաև, որ երեխաները գիտակցեն, որ ոչ միայն արարքները, այլև բառերն ու կոպիտ արտահայտություններն էլ կարող են խանգարել ընկերությանը:

4. Հաջորդ առաջադրանքը ապահովում է միջառարկայական կապը մայրենիի հետ, և կատարվում է անհատական: Երեխաները համապատասխանեցնում են ասացվածքների սկիզբն ու վերջը: Հետո դրանք արտագրում են իրենց աշխատանքային տետրերում և սովորում անգիր՝ բացատրելով (եթե նրանք չկարողանան, ուսուցիչը կարող է բացատրել):

5. Այս առաջադրանքը շատ կարևոր է, քանի որ նպաստում է աղջիկների և տղաների միջև ընկերությանը: Երեխաները պետք է գիտակցեն, որ իսկական ընկերության մեջ սեռը կարևոր չէ, որ մարդկային որակներն են կարևոր, ազնվությունը, արդարամտությունը, նվիրվածությունը, վստահությունը, որ ընկերությունը պահելու համար կարևոր է յուրաքանչյուրի դերը (անդրադարձ **«Անհատ և հարաբերություններ»** խաչվող հասկացությանը):

6. Ուսուցիչը երեխաների համար ընթերցում է վերևում նշված դասագրքի 8-րդ էջի հեքիաթը, դասարանը բաժանում է խմբերի և առաջարկում է, որ երեխաները մտածեն ու փորձեն հորինել ավարտ: Դրա համար տալիս է ժամանակ, որից հետո խմբի անդամներից մեկը ներկայացնում է իրենց հորինածը: Այնուհետև հարցերի օգնությամբ կազմակերպվում է քննարկում, որի նպատակն է ամփոփել դասի հիմնական նպատակը:

7. Եթե ժամանակը բավարարի, առաջարկվում է նաև կատարել իրավիճակային քննարկումներ՝ վերը նշված դասագրքի 3-րդ առաջադրանքը:

8. Տնային աշխատանք:

9. Ձևավորող գնահատում:

## ԴԱՍ 6 (23) - ՀԱՐԳԱՆՔ ԵՎ ՓՈԽՕԳՆՈՒԹՅՈՒՆ

**Նպատակները** – Օգնել, որ աշակերտները կարևորեն հարգանքը, փոխօգնության գաղափարը ընկերության մեջ, հասկանան՝ ինչպես պետք է արդյունավետ շփվել, կարողանան լսել միմյանց, հարգել մյուսների կարծիքը, տարակածության դեպքում հաշտության ճանապարհներ գտնել:

### **Վերջնարդյունքներ**

**2Շ.Մ.Փ.Դ2** *Կարևորել հարգանքը, փոխօգնությունը, պատրաստակամ լինել և կիսել ունեցածը, երբ դրա անհրաժեշտությունը կա:*

**2Շ.Մ.Փ.Կ1** *Արդյունավետ շփվել, կարողանալ լսել միմյանց, հարգել միմյանց կարծիքը, հաշտության ճանապարհներ գտնել:*

### **Անհրաժեշտ պարագաներ**

- Իրավիճակներ արտահայտող քարտեր:

### **Ընթացքը**

«Ես և շրջակա աշխարհը» առարկայի 3-րդ դասարանի գործող դասագրքի թեմա 1, դաս 2, էջ 13 – 17 նյութերը՝

[«Ես և շրջակա աշխարհը» Լ.Ալեքսանյան, Ն.Թորոսյան մաս 1](#)

1. Դասը պետք է սկսել քննարկմամբ՝ ինչպես են մարդիկ օգնում միմյանց, երբ է ավելի հեշտ հաղթահարել դժվարությունները:
2. Այնուհետև ուսուցիչը հանձնարարում է կարդալ 2-րդ առաջադրանքի հրահանգները, տրամադրում է ժամանակ, որպեսզի աշակերտները կատարեն առաջադրանքը, ապա շրջեն և նայեն, թե իրենց ընկերները ինչպես են կատարել:
3. Այնուհետև իրականացվում է քննարկում դարձյալ հարցերի օգնությամբ՝ պարզելու, թե ինչ է զգում մարդը, երբ ինքն է օգնում կամ իրեն են օգնում: Կարևոր է, որ աշակերտները արժևորեն փոխօգնությունը, միմյանց հետ

արդյունավետ շփվելու հնարավորությունները, ձեռք բերեն միասին աշխատելու համագործակցային կարողություններ:

4. Հաջորդ առաջադրանքը համագործակցային աշխատանք է, աշակերտները, նախապես որոշելով թե ինչ պետք է նկարեն, զույգով աշխատելու են նույն թղթի վրա: Հարկ է, որ նրանք գիտակցեն միմյանց օգնելու, միասին մի բան ստեղծելու կարևորությունը, հասկանան, թե երբ է ավելի հեշտ աշխատել, որն է մենակ աշխատելու և միասին՝ զույգով կամ խմբով աշխատելու առավելությունը: Ուսուցիչը ամբողջ աշխատանքի ընթացքում պետք է հետևի, որ աշակերտները լսեն միմյանց, կիսեն իրենց գաղափարները, ինչու չէ, նաև աշխատանքային պարագաները: Այս առաջադրանքը ապահովում է նաև միջառարկայական կապ **Մայրենիի և Արվեստի** հետ:

Ողջ դասի ընթացքում պետք է անդրադարձ կատարել **«Անհատ և հարաբերություններ»**, **«Պատճառ և հետևանք»** խաչվող հասկացություններին:

5. Այս առաջադրանքը կատարելու համար ուսուցիչը բաժանում է խմբերին իրավիճակներ ներկայացնող քարտեր և խնդրում է, որ աշակերտները խմբում կարդան իրավիճակները, քննարկեն և միասին լուծումներ գտնեն, թե մարդն ինչ է զգում տվյալ իրավիճակում և ինչպես պետք է նրան օգնի ընկերը: Սա լավ հնարավորություն է նորից անդրադառնալու իսկական ընկերոջ բնութագրիչներին:
6. Տնային աշխատանք:
7. Ձևավորող գնահատում:

## **ԴԱՍ 7 (24) - ԵՍ ԷԼ ԵՄ ՔԵՉ ՆՄԱՆ**

**Նպատակները** – Օգնել գիտակցել, որ մարդկային հարաբերությունները հիմնված են ոչ թե ֆիզիկական հատկանիշների, այլ անձնային որակների վրա: Ձևավորել ապրումակցման, դիմացինին հասկանալու հմտություններ:

### **Վերջնարդյունքներ**

**2Շ.Ե.Ի.Մ3** Հարգել միմյանց տարբերությունները, նշել, որ բոլորը տարբեր կարողություններ ունեն, նաև՝ հաշմանդամություն և զարգացման առանձնահատկություններ ունեցող մարդիկ:

### **Անհրաժեշտ պարագաներ**

- **Նկարների փաթեթ**

#### **Ընթացքը**

1. Շատ նուրբ, զգայուն հարց է շոշափվում այս դասի ընթացքում: Շատ կարևոր է, որ ուսուցիչը լինի առավել նրբանկատ, զգայուն, հատկապես, եթե այդ դասարանում սովորում է առանձնահատուկ կարիքներ ունեցող երեխա: Հարկավոր է ստեղծել ջերմ, բարյացկամ մթնոլորտ, որպեսզի երեխաները խոսեն անկաշկանդ: Ուսուցիչը յուրաքանչյուր խմբի տալիս է մի նկար և առաջարկում է հորինել մի պատմություն: Առաջադրանքը կատարելու համար տրվում է ժամանակ, որից հետո խմբի անդամներից մեկը կարդում է իրենց պատմությունը: Երբ բոլոր խմբերը ներկայացնում են իրենց աշխատանքները, ուսուցիչը հարցնում է երեխաներին՝ եթե իրենք լինեին պատմության հերոսի տեղը, ինչ կզգային, ինչպիսին կուզենան, որ լինի իրենց ընկերը: Պետք է երեխաների ուշադրությունը հրավիրել այն բանի վրա, որ բոլորը կարևոր են անձնային որակները, ոչ թե ֆիզիկական:

Այս վարժությունը նպաստում է անհատի արժևորմանը, ինքնահաստատմանը, սովորեցնում է հարգել տարբերություններն ու անհատականությունը, կարևորում է փոխօգնության դերը:

2. Այնուհետև ուսուցիչը կամ աշակերտներից մեկը կարդում է փոքրիկ տեքստը, որտեղ նշվում է և կարևորվում ամեն մեկի յուրահատուկ, առանձնահատուկ լինելը:
3. Տնային աշխատանք
4. Ձևավորող գնահատում

## ԴԱՍ 8 (25) – ԻՄ ՏՈՒՆԸ, ԻՄ ԲԱԿԸ, ԻՄ ՓՈՂՈՅԸ

**Նպատակը** – Ձևավորել շրջակայքը ուսումնասիրելու ճանաչելու հմտություններ, ծանոթանալ շրջակայքում առկա հաստատություններին, դրանցում աշխատող մարդկանց և իմանալ դրանց նշանակության մասին: Ձևավորել շրջակայքում կողմնորոշվելու հմտություններ, ծանոթացնել համայնքի անդամների դերերին, օգնել գիտակցել դրանց նշանակությունը և փոխկապվածությունը, իմանալ համակեցության կանոնները:

### **Վերջնարդյուքներ**

**2Շ.Մ.Փ.Հ1-4 Նկարագրել իր բնակավայրում ապրող մարդկանց, զբաղմունքները, սովորույթները, առանձնահատկությունները:**

**2Շ.Մ.Փ.Հ3 Կողմնորոշվել տարածքում, իմանալ տան, դպրոցի հասցեն, կարողանալ կարդալ ցուցանակները, իմանալ կանոնները, դրանց պահպանման կարևորությունը:**

### **Անհրաժեշտ պարագաներ**

Չկան

### **Ընթացքը**

«Ես և շրջակա աշխարհը» առարկայի գործող դասագրքի՝ թեմա 4, դաս 1, էջ 33-37-ի նյութերը՝ համադրելով ստորև ներկայացված նյութերի հետ:

[«Ես և շրջակա աշխարհը, Ն.Թորոսյան, Լ.Ալեքսանյան» մաս 1](#)

**Դասը ամբողջությամբ կարելի է անցկացնել դրսում՝ տարածքը ուսումնասիրելով:**

1. Երեխաները կամ ուսուցիչը ընթերցում են «Իմ աշխարհը» տեքստը, քննարկում հարցերը:
  - Որտե՞ղ է գտնվում ձեր տունը:
  - Որտե՞ղ է գտնվում ձեր թաղամասը:
  - Որտե՞ղ է գտնվում ձեր գյուղը կամ քաղաքը:

- Իսկ ձեր երկի՞րը որտեղ է գտնվում:
2. Ուսուցիչը երեխաների համար ընթերցում է վերևում հիշատակված դասագրքի 34-35 էջերի՝ «Թե ինչ պատահեց, երբ քամին խառնեց ցուցանակները» հեքիաթը: Հեքիաթը պատկերավոր ձևով ցույց է տալիս, թե ինչ կարևոր են ցուցանակները և ինչ նշանակություն ունեն դրանք:
  3. Հեքիաթից հետո ուսուցիչը հնչեցնում է հարցերը, որոնց պատասխանելուց հետո, միասին շրջելով տարածքում, փորձում են կողմնորոշվել ցուցանակներով: Հավանական է, որ գյուղական վայրերում ցուցանակները քիչ լինեն, այդ դեպքում երեխաները պետք է ասեն, թե իրենք ինչպես կարող են կողմնորոշվել կամ լավ են ճանաչում տարածքը և կարող են գտնել հիշողությամբ, կամ կարող են հարցուփորձ անել շրջապատի մարդկանց և գտնել իրենց ուզած վայրը:
 

Ուսուցիչը երեխաներին զգուշացնում է ուշադրություն դարձնել և մտապահել, թե ինչ շենքերի, կառույցների, տների, ծառերի, այգիների մոտով են անցել, որպեսզի նույն ճանապարհով էլ վերադառնան դպրոց:

Շրջելիս ուշադրություն պետք է դարձնեն, թե իրենց թաղամասում մարդիկ ինչով են զբաղվում. առևտրի կետերը, խանութները, արհեստանոցները... Կարելի է զրուցել նրանց հետ, հարցուփորձ անել՝ որքան ժամանակ է, որ այդտեղ աշխատում են, ինչ կարող են պատմել իրենց փողոցի ու մարդկանց մասին...

Ուսուցիչը պետք է երեխաների ուշադրությունը հրավիրի ճանապարհային երթևեկության կանոնները պահպանելու, փողոցում չաղմկելու և աշխատող ու շտապող մարդկանց չխանգարելու, աղբ չթափելու, մարդկանց ճանապարհ տալու և այլ վարքականոնների վրա, որոնք հիրենց համայնքն ավելի հարմարավետ են դարձնում:
  4. Եթե եղանակը հարմար չէ, կամ այլ պատճառով դասը դասարանում եք անցկացնում, կատարում եք դասագրքի էջ 36-ի զույգերով աշխատանքը. գտնել «Խառնաշփոթ» նկարում թույլ տրված սխալները:
  5. Ապա ուսուցիչը հնչեցնում է հետևյալ հարցը.
    - Փոստատարը պետք է մեր դպրոց փաթեթ բերի, բայց չգիտի դպրոցի տեղը, ի՞նչ պետք է նա իմանա, որ կարողանա տեղ հասցնել փաթեթը:

Ուսուցիչը հարցի միջոցով երեխաներին ուղղորդում է գիտակցելու հասցեի նշանակությունը: Դպրոցի հասցեն գրում է գրատախտակին:

Անհատական աշխատանք. աշխատանքային տետրում լրացնել դպրոցի հասցեն և մտապահել:
  6. Տնային հանձնարարություն:
  7. Ձևավորող գնահատում:

## ԴԱՍ 9 (26) – ԵԿԵՔ ԿՈՂՄՆՈՐՈՇՎԵՆՔ

**Նպատակը** - Ձևավորել շրջակայքում կողմնորոշվելու հմտություններ՝ հորիզոնի կողմերի մասին գաղափար տալով, տարածքում կողմնորոշվելու կամ ուղղորդելու համար գործածվող բառերի իմացություն և կիրառում: Ծանոթացնել համայնքի անդամների դերերին, մասնագիտություններին, գործող ծառայությունների նշանակությանն ու փոխկապվածությանը:

### **Վերջնարդյունքներ**

**2Շ.Մ.Փ.Հ3** *Կողմնորոշվել տարածքում, իմանալ տան, դպրոցի հասցեն, կարողանալ կարդալ ցուցանակները, իմանալ կանոնները, դրանց պահպանման կարևորությունը:*

**2Շ.Մ.Փ.Հ3ա** *Պարզ բացատրություններ տալ, թե ինչի համար են դպրոցը, հիվանդանոցը, բանկը, ոստիկանությունը, զբոսայգին (հարևանությամբ գտնվող տարբեր հանրային նշանակություն ունեցող կառույցներ), ինչպես օգտվել դրանցից:*

### **Ընթացքը**

«Ես և շրջակա աշխարհը» առարկայի գործող դասագրքի թեմա 4, դաս 2, էջ 38-39-ի նյութերը՝ համադրելով ստորև ներկայացված նյութերի հետ:

[«Ես և շրջակա աշխարհը», Ն.Թորոսյան, Լ.Ալեքսանյան, մաս 1](#)

1. Ծանոթանալ հյուսիս, հարավ, արևելք, արևմուտք հասկացություններին: Ուսուցիչը երեխաներին բացատրում է, որ արևը ծագում է արևելքից, երբ իրենք առավոտյան կանգնեն դեմքով դեպի արևը, դա էլ հենց արևելքն է, ձախ կողմում կլինի հյուսիսը, աջում հարավը, իսկ ետևում՝ արևմուտքը: Բացատրում է, որ սա շատ կարևոր գիտելիք է, որն իրենք միշտ պետք է հիշեն՝ տարածքում կողմնորոշվելու համար: Անդրադարձ կատարել «**Ժամանակ և տարածություն**» խաչվող հասկացությանը:
2. Ուսուցիչը առաջարկում է կարդալ փոքրիկ բացատրություն հորիզոնի կողմերի մասին՝ բացատրելով, թե ինչի համար է անհրաժեշտ այդ գիտելիքը, կարելի է նաև բերել օրինակներ, թե չիմանալու, կողմնորոշվել չկարողանալու պատճառով ինչ հետևանքներ կարող են լինել: Անդրադարձ կատարել «**Պատճառ և հետևանք**» խաչվող հասկացությանը:
3. Ապա, օգտվելով էջ 38-ի քարտեզից, զույգերով աշխատելով, պետք է փորձեն կատարել նկար-քարտեզի առաջադրանքը:

4. Գործնական աշխատանք է, որի նպատակը ստացած գիտելիքի ամրապնդումն է: Ուսուցիչը առաջարկում է դուրս գալ բակ, ուսումնասիրել տարածքը և պարզել, թե ինչ ծառայություններ կան իրենց համայնքում, միաժամանակ օգտագործել նոր բառապաշար՝ հյուսիս, հարավ, արևելք, արևմուտք և այլն:

5. Քննարկել հարցերը՝ վեր հանելով համայնքում գործող ծառայությունների և դերերի անհրաժեշտությունը: (էջ 39)

Աշխատանք խմբերով. յուրաքանչյուր խումբ 2-3 նախադասությամբ պետք է ավարտի ներկայացված անավարտ պատմություններից որևէ մեկը: (պատմությունները՝ դասագրքի էջ 39-ում): Աշխատանքները ներկայացվում են դասարանին՝ ընդգծելով այդ մասնագիտություններից յուրաքանչյուրի կարևորությունը, դերը համայնքում: Ուսուցիչն ինքը կարող է հորինել նմանատիպ պատմություններ:

6. **Տնային աշխատանք** - «**Մեր սիրելի բնակավայրը**» հետազոտական կարճաժամկետ նախագծային աշխատանք: Ուսուցիչը առաջարկում է ամբողջ դասարանով ստեղծել գրքույկ, որը կպատմի սեփական բնակավայրի մասին: Աշխատանքի համար կարելի է սահմանել 2 շաբաթ ժամանակ: Դասարանը բաժանել 4-5 խմբերի և հանձնարարել միասին աշխատելով հավաքել տեղեկություններ իրենց բնակավայրի մասին: Աշխատանքը ստեղծագործական բնույթի է, ունի ճանաչողական արժեք, հնարավորություն է տալիս ավելի մանրամասն ուսումնասիրելու սեփական բնակավայրը: Տալիս է հնարավորություն անդրադարձ կատարելու «**Անհատ և մշակույթ**», «**Անհատ և հարաբերություններ**», «**Մասշտաբ, համամասնություն և քանակ**» խաչվող հասկացություններին:

7. Ձևավորող

գնահատում:

## ԴԱՍ 10 (27) – ԻՄ ՔԱՂԱՔԸ, ԻՄ ԳՅՈՒՂԸ

**Նպատակը** – Օգնել, որ սովորողները ճանաչեն և արժևորեն հայրենի բնակավայրը՝ գյուղը կամ քաղաքը, կարողանան հասկանալ քաղաքի և գյուղի տարբերությունները, ընդլայնեն գիտելիքները սեփական բնակավայրի, մարդկանց, զբաղմունքների, սովորույթների մասին:

### **Վերջնարդյունքներ**

**2Շ.Մ.Փ.Հ2-4 Համեմատել և բնութագրել քաղաքի և գյուղի տարբերությունները, առանձնահատկությունները:**

**2Շ.Մ.Փ.Հ2-4ա Թվարկել և նկարագրել իր բնակավայրի տեսարժան վայրերն ու հուշարձանները, բնակավայրի բնությունը, բույսերն ու կենդանիները:**

### **Ընթացքը**

**«Ես և շրջակա աշխարհը» առարկայի գործող դասագրքի՝**

**[«Ես և շրջակա աշխարհը»-2, Ն.Թորոսյան, Լ.Ալեքսանյան» մաս 1](#)**

**Թեմա 5, Դաս 1, էջ 41-45–ի նյութերը**

**[«Ես և շրջակա աշխարհը»-2, Ա.Հովսեփյան, Ա.Կարապետյան, Ն.Տողանյան և այլք](#)**

**Դաս 10, էջ 33- 37–ի նյութերը**

1. Դասը սկսել հարցերի միջոցով՝ փորձելով պարզել՝ գիտեն արդյոք սովորողներն իրենց քաղաքի կամ գյուղի, մարզի անունը: Կարևոր է, որ նրանք իմանան իրենց երկրի, մարզի, բնակավայրի անվանումները, կարողանան հասկանալ գյուղական և քաղաքային բնակավայրերի առանձնահատկությունները: Այնուհետև ուսուցչի օգնությամբ քարտեզի վրա գտնում են իրենց մարզը, մարզկենտրոնը և իրենց բնակավայրը (կամ դրա մոտավոր տեղը):
2. Այս առաջադրանքը ստեղծագործական բնույթ ունի, այն սովորողներին հնարավորություն է տալիս արտահայտելու սեփական վերաբերմունքը բնակավայրի մասին, հնարավորություն է տալիս ավելի լավ ճանաչելու հայրենի բնօրրանը: Միջառարկայական կապ **Արվեստի** հետ:
3. Աշխատանք տեսրերում - Ուսուցիչն առաջարկում է պատասխանել էջ 42-ի հարցաշարին և գրել տեսրերում: Առաջադրանքը նպաստում է, որ երեխաները սովորեն ճիշտ իմանալ և գրել երկրի, մարզի, բնակավայրի,

փողոցի, թաղամասի անունները: Ապահովում է միջառարկայական կապը **Մայրենիի** հետ:

4. «Ամենից լավ տունը» բանաստեղծության ընթերցում և քննարկում:
5. Տնային աշխատանք - Շարունակել «**Մեր սիրելի բնակավայրը**» հետազոտական կարճաժամկետ նախագծային աշխատանքը: Այս անգամ հանձնարարվում է հավաքել տեղեկություններ իրենց բնակավայրի ամենահայտնի մարդու, ամենահին շենքի, կառուցված առաջին դպրոցի, մանկապարտեզի, ամենաձեր մարդու, ամենափոքրիկ նորածնի, պահպանվող մշակութային կառույցի, առաջին փողոցի, ամենանոր կառույցի, այդ բնակավայրի «Կարմիր գրքում» պահպանվող բույսերի ու կենդանիների մասին: Աշխատանքի ընթացքում ուսուցիչը պետք է ուղղորդի, օգնի, նշի այն աղբյուրները, որտեղից կարող են օգտվել երեխաները: Աշակերտները պատրաստում են աշխատանքները հաջորդ շաբաթ ներկայացնելու համար:
6. Ձևավորող գնահատում:

## ԴԱՍ 11 (28) – ԻՄ ՀԱՅՐԵՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԸ

**Նպատակը** - Ձևավորել հոգատար վարքագիծ բնակավայրի, բնաշխարհի, մշակութային արժեքների նկատմամբ:

### Վերջնարդյունքներ

**2Շ.Մ.Փ.Հ1-2.4** *Ցուցաբերել պատրասխանափու, խնայող և հոգաբար վերաբերմունք հայրենի բնակավայրի, շրջակա միջավայրի և բնակիչների հանդեպ:*

### Ընթացքը

«Ես և շրջակա աշխարհը» առարկայի գործող դասագրքի՝

[«Ես և շրջակա աշխարհը»-2, Ն.Թորոսյան, Լ.Ալեքսանյան» մաս 1](#)

**Թեմա 5, Դաս 2, էջ 46 - 49 – ի նյութերը**

[«Ես և շրջակա աշխարհը»-2, Ա.Հովսեփյան, Ա.Կարապետյան, Ն.Տողանյան և այլք](#)

**Դաս 10, էջ 38-40–ի նյութերը**

1. Ուսուցիչը դասը սկսում է հարցերով՝ պարզելով, թե սովորողներն ինչպես են հասկանում, պատկերացնում սերը հայրենի բնակավայրի նկատմամբ:
2. Աշակերտները նայում են նկարները, վերլուծում բովանդակությունները՝ մեկնաբանելով, պարզաբանելով, թե նկարի հերոսներից ով է սիրում իր բնակավայրը, ով՝ ոչ: Կարևոր է, որ երեխաները կարողանան հիմնավորել իրենց կարծիքը:
3. Նախագծային աշխատանքների ներկայացումներ - Խմբերը հերթով ներկայացնում են իրենց կատարած աշխատանքները, հետո բոլորը հավաքում են, կարում, գրքի տեսք տալիս: Կարելի է նաև (հնարավորության դեպքում) գիրք պատրաստել, դա շատ կոգևորի երեխաներին, հնարավորության կտա ավելի ուշադիր լինելու հայրենի բնակավայրի նկատմամբ:
4. Տնային հանձնարարություն – Ուսուցիչը կարող է նախօրոք վերնագրած 2 պաստառ ունենալ՝ «Մեր սիրելի բնակավայրը» և «Ես հպարտանում եմ»: Երեխաներին առաջարկում է վերնագրերին համապատասխան նկարներ նկարել, որոնք կպատկերեն իրենց քաղաքի կամ գյուղի մշակութային արժեք ներկայացնող վայրերի նկարները, հաջորդ դասին բերել, փակցնել համապատասխան պաստառին:
5. Ձևավորող գնահատում: